ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ մայիսի 2022 թվականի №___Ա
ք. Երևան

«ԼԵՌՆԱՊԱՏԻ ԿԱՆԹԵՂ», «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ», «ՇԱՂԱՏ», «ՀՈՍՔ», «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ «ԼԵՌՆԱՊԱՏ ՀԷԿ-1», «ԼԵՌ ԷՔՍ ՀԷԿ-4», «ԼԵՌ-ԷՔՍ ՀԷԿ-6», «ՇԱՂԱՏ», «ԲՈՎԱՁՈՐ» ԵՎ «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 22-րդ հոդվածի 3.1. կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1) «ԼԵՌՆԱՊԱՏԻ ԿԱՆԹԵՂ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Լեռնապատ ՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ 25.965 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝

ա. «Լեռ էքս ՀԷԿ-4» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքված էլեկտրական էներգիայի սակագինը՝ 17.307 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի,

բ. «Լեռ-էքս ՀԷԿ-6» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքված էլեկտրական էներգիայի սակագինը՝ 11.539 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՇԱՂԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Շաղատ» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքված էլեկտրական էներգիայի սակագինը՝ 25.965 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀՈՍՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Բովաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքված էլեկտրական էներգիայի սակագինը՝ 17.307 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի.
5) «ՔՈՒՌԿԻԿ ՋԱԼԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Քուռկիկ ջալալ» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքված էլեկտրական էներգիայի սակագինը՝ 25.965 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից և սույն որոշման 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետը գործում է մինչև 2023 թվականի մայիսի 7-ը.
2) 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը գործում է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 14-ը, «բ» պարբերությունը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 28-ը.
3) 3-րդ ենթակետը գործում է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 27-ը.
4) 4-րդ ենթակետը գործում է մինչև 2022 թվականի նոյեմբերի 23-ը.
5) 5-րդ ենթակետը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 28-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
__մայիսի 2022թ.